

ՏԵՂԵԿԱԼՔ

2022 թվականի երրորդ եռամսյակում Սյունիքի մարզպետարանի մուտք գործած և մարզպետարանից առաքված փաստաթղթերի վերաբերյալ

2022 թվականի երրորդ եռամսյակում մարզպետարան է մուտքագրվել՝ 3359 թղթակցություն, առաքվել՝ 2491 փաստաթուղթ: Այդ թվում ստացվել է 33 Ազգային ժողովից՝ 3, 33 վարչապետի աշխատակազմից՝ 99, 33 տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 306, հանրապետական գործադիր մարմիններից և գերատեսչություններից՝ 386, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 783, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 1230, գաղտնի թղթակցություն՝ 35, քաղաքացիներից՝ 513 դիմում:

33 Սյունիքի մարզպետարան է վերահասցեագրվել 53 դիմում, որից՝ 33 Ազգային ժողովից՝ 2, 33 վարչապետի աշխատակազմից՝ 31, 33 մարդու իրավունքների պաշտպանից՝ 2 33 տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 11, հանրապետական գործադիր մարմիններից՝ 7:

Մարզպետարանի մուտք գործած փաստաթղթերին, սահմանված կարգով և ժամկետներում տրվել են համապատասխան ընթացք:

Պարբերաբար մարզպետի մոտ կատարվում է քաղաքացիների ընդունելություն:

Բացի այդ քաղաքացիների ընդունելություն է կատարվում նաև մարզպետի՝ համայնքներ կատարած այցելությունների ժամանակ:

2022 թվականի երրորդ եռամսյակում կատարվել է 23 քաղաքացիների ընդունելություն:

Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպում են ամենօրյա, աշխատանքային կարգով:

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվում է 33 վարչապետի աշխատակազմ:

Քաղաքացիների ընդունելության մասին տեղեկատվությունը ամենամսյա պարբերականությամբ ներկայացվում է նաև 33 տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: